ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատաշեն, (096) 444444, azatashen.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 32

ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14- րդ հոդվածի 6- րդ կետի պահանջներով .

Ավագանին որոշում է՝

Հաստատել Ազատաշեն համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 16 - ի թիվ 11 հերթական նիստի օրակարգը՝

1. Ազատաշեն համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 20- ի << Ազատաշեն համայնքի 2020թվականի բյուջեն հաստատելու մասին >> թիվ 35 - Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2.Ազատաշեն համայնքում 2021թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները նդրույքաչափերը սահմանելու մասին
3. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու , համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
4. Համայնքապետարանի տարեվերջյան գույքագրման արդյունքները հաստատելու մասին
5. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՆՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԻՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատաշեն, (096) 444444, azatashen.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 33-Ն

ԱԶԱՏՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 35-ՆՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 – րդ հոդվածի 1- ին մասի 5- կետի և << Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33- րդ հոդվածի պահանջներով

Ավագանին որոշում է՝

Ազատաշեն համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 20- ի << Ազատաշեն համայնքի 2020թվականի բյուջեն հաստատելու մասին >> թիվ 35 - Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.Ոչ հարկային եկամուտներից համայնքի բյուջե մուտքագրված գումարներով պլանավորված՝
որոշման 3 – րդ կետի 7- րդ ենթակետի պահուստային ֆոնդ տողի << 785700>> թիվը փոխարինել <<1807820>> թվով , իսկ որոշման 4- րդ կետի 11 1 2 խմբի 4891հոդվածի պահուստային ֆոնդ տողի<< 785700 >> թիվը փոխարինել << 1807820>> թվով :
2. Աշխատակազմի և միջհամայնքային միավորման համար նախատեսված գումարները քիչ պլանավորելու համար, ինչպես նաև ոչ հարկային եկամուտներից համայնքի բյուջե մուտքագրված գումարներով պլանավորված՝
որոշման 3 – րդ կետի 7- րդ ենթակետի պահուստային ֆոնդ տողի << 1807820>> թիվը փոխարինել << 505700>> թվով , իսկ որոշման 4- րդ կետի 11 1 2 խմբի 4891հոդվածի պահուստային ֆոնդ տողի << 24144420 >> թիվը փոխարինել << 505700>> թվով :
3.Աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձի համար նախատեսված գումարը քիչ պլանավորելու համար որոշման 3- րդ կետի 1- ին ենթակետի 01 1 1 խմբի պետական մարմինների կառավարման տողի <<14971000>> թիվը փոխարինել

<< 15221000>> թվով , իսկ որոշման 4- րդ կետի 01 1 1 խմբի 4111 հոդվածի կառավարման ապարատի աշխատողների աշխատավարձ տողի <<12350000>>թիվ փոխարինել << 12600000>>թվով :

4. Միջհամայնքային միավորման համար նախատեսված գումարը քիչ պլանավորելու համար որոշման 3 – րդ կետի 5- րդ ենթակետի 01 3 3 խմբի ընդհանուր բնույթի այլ ծառայություն տողի <<345000>>թիվը փոխարինել << 375000>թվով , իսկ որոշման 4- րդ կետի 01 3 3 խմբի 4819հոդվածի նվիրատվության տողի << 345000>> թիվը փոխարինել << 375000>>թվով:

5.Համայնքի բյուջեի մուտքագրված գումարներով պայմանավորված որոշման 6- րդ կետի եկամուտների և ծախսերի գծով տողի << 13170>> թիվը փոխարինել <<1641990>> թվով , իսկ որոշման 6 – րդ կետի 2- րդ ենթակետի 01 1 1 օրենսդիր և գործադիր մարմիններ տողի << 13170>> թիվը փոխարինել << 1641990>> թվով և որոշման 6 – րդ կետի 2 – րդ ենթակետի 5113 շենք շինության կապիտալ վերանորոգ ման տողի << 13170>> թիվը փոխարինել << 1641990 >> թվով :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՆՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԻՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատաշեն, (096) 444444, azatashen.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 34-Ն

ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<< Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18- րդ հոդվածի 1-ին մասի 18- րդ կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9- րդ, 10- րդ , 11- րդ ,12- րդ , 13 –րդ , 14- րդ հոդվածների պահանջներով .

Ավագանին որոշումէ՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնքում 2021թվականի տեղական տուրքերի տեսակները և հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,

բ. սույն կետի 1- ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և

շինությունների համար՝ 15000/ տասհինգ հազար/ դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000/ քսանհինգ հազար/ դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000/քսանհինգ հազար/ դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝50000/ հիսուն հազար / դրամ,
գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 /հազար հինգ հարյուր / դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500/ երկու հազար հինգ հարյուր / դրամ,
2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 / հազար հինգ հարյուր /դրամ,
բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն
կետի 1 – ին ենթակետի սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,
գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն կետի 1- ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը,
3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500/ երկու հազար հինգ հարյուր / դրամ,
4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000/ հարյուր հազար / դրամ,

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000/ երեսուն հազար / դրամ,

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝25000/քսանհինգ հազար / դրամ,

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝հինգ հազաև հինգ հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յոթ հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներեք հազար դրամ,

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար հինգ հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝տասնմեկ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներեք հազար դրամ,

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 175/ հարյուր յոթանասուն հինգ / դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար,

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000/քսանհինգ հազար / դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 15000/տասնհինգ հազար/ դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 100000/ հարյուր հազար / դրամ,

դ. խաղատների համար՝250000/երկու հարյուր հիսուն հազար / դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 150000/ հարյուր հիսուն հազար/ դրամ,

զ. վիճակախաղերի համար՝75000/յոթանասունհինգ հազար/ դրամ,

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500/ երկու հազար հինգ հարյուր / դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000/ չորս հազար / դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի

օբյեկտի համար՝ 6000/վեց հազար / դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000/ ութ հազար / դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000/ տասնմեկ հազար / դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000/ տասնվեց հազար / դրամ,

բ.ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500/ հինգհարյուր /դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 /հազար / դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500/ հազար հինգ / << դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000/ երեք հազար / դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000/ հինգ հազար/ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000/ութհազար / դրամ,

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝1000 /հազար / դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750/հազարյոթ հարյուրհիսուն / դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 750/յոթհարյուրհիսուն / դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 188 /հարյուրութանասունութ / դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի՝75 / յոթանասուն հինգ / դրամ,

12) Հայաստանի Հանրապետության Ազատաշենհամայնքի անվանումը, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան,ապրանքների արտադրության,

աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 / հիսուն հազար / դրամ,

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 /հինգհազար / դրամ,

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 250000/ երկու հարյուր հիսուն հազար /դրամ,

15) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար 25000 / քսանհինգհազար / դրամ,

16) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում 10000/ տասը հազար/ դրամ,

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում 50000/ հիսուն հազար / դրամ:

2. Սույնորոշման 1- ին կետով սահմանված դրույքաչափերի համար կիրառվել է՝ 0.5 գործակիցը:

3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնքում սահմանել 2021թվականի տեղական վճարների տեսակները և հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայություն ների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 / հինգ հազար / դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 / հինգ հազար / դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար

սահմանել 5000/ հինգ հազար / դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել30000 /երեսուն հազար/ դրամ .

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 / երեք հազար / դրամ,

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000/ երեք հազար / դրամ,

7) համայնքի կողմից աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար , յուրաքանչյուր ամիս սահմանել վճար ՝

ա .կենցաղային աղբի համար , ըստ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ՝ 100 / հարյուր /դրամ,

բ. ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով՝

- առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 / հիսուն/ դրամ,

- հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20/ քսան / դրամ,

- վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ,

- գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովութ յան, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիա կան պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3/ երեք /դրամ,

- արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 / հինգ / դրամ,

բ1. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50/ հիսուն / դրամ,

գ. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչբնակելի տարածքների վերաբերյալ

սույն որոշման 7 -րդ ենթակետի բ պարբերության1-5տողերում սահմանված դրույքաչափի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝3000/ երեք հազար/դրամ, կամ
- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000/ տասը հազար / դրամ,

8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկփաստաթղթիհամար՝փոխհատուցմանվճարսահմանել 500/ հինգ հարյուր / դրամ,

9)համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝սահմանել՝

ա. կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝500/ հինգհարյուր / դրամ,

բ. ծննդօգնություն՝թեթև միջամտությանդեպքում 1000 /հազար / դրամ,
ծանր միջամտության դեպքում 5000 / հինգ հազար / դրամ ,

գ.վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների մունական խարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլն մուշառում բացառությամբ ՝
<< Գյուղատնտեսական կեդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների մանր եղջերավոր անասունների համար 100 / հարյուր / դրամ , խոշոր եղջերավոր անասունների համար 200 / երկուհարյուր / դրամ,

դ.կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարի համար՝200 / երկուհարյուր / դրամ,

ե. ախտահանության 1 քառակուսի մետրիհամար 200 / երկուհարյուր / ՀՀդրամ

զ. միջատազերծում (դեզինսեկցիա)՝1 քառակուսիմետրի համար՝100 / հարյուր / դրամ,

է. կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) ՝1 քառակուսի մետրիհամար՝200 / երկու հարյուր / դրամ,

ը. արհեստական սերմնավորման համար՝5000 / հինգհազար / դրամ,

թ. կենդանու հերձում մանր եղերավոր անասունների համար ՝1000/ հազար / դրամ , խոշոր եղջերավոր անասուններիհամար՝3000/ երեք հազար / դրամ,

ժ. կենդանու բուժում յուրաքանչյուր այցելությունը մանր եղջերավոր անասունների համար 1000 / հազար /դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 2000 / երկու հազար / դրամ ,

ի. կենդանիների նախասպանդային զննում մանր եղջերավոր անասունների համար 1000 / հազար / դրամ , խոշոր եղջերավոր անասունների համար 2000 / երկու հազար / դրամ :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ենոքյան Արմեն

Խաչատրյան Գուրգեն

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԻՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատաշեն, (096) 444444, azatashen.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 35

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 1 -ին մասի 11- րդ և 28- րդ կետի պահանջներով .

Ավագանին որոշում է՝

1.Սահմանել համայնքի ղեկավարի վարձատրության չափը 252000/ երկու հարյուր հիսուն երկու հազար /ՀՀ դրամ , 2021թվականի համար:
2.Հաստատել 2021թվականի համար համայնքապետարանի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝
1/ համայնքի ղեկավարի տեղակալ – 1 հաստիքային միավոր – 130000/ հարյուր երեսուն հազար / ՀՀ դրամ
2/ քարտուղար -1 հաստիքային միավոր - 200000 / երկու հարյուր հազար / ՀՀ դրամ
3/ առաջատար մասնագետ - 1հաստիքային միավոր - 131000 / հարյուր երեսուն մեկ հազար / ՀՀ դրամ
4/ առաջին կարգի մասնագետ - 1հաստիքային միավոր - 130000/ հարյուր երեսուն հազար /ՀՀ դրամ
5/երկրորդ կարգի մասնագետ - 1 հաստիքային միավոր -126000 / հարյուր քսան վեց հազար /ՀՀ դրամ
6/ հավաքարար - 1 հաստիքային միավոր -90000 / իններսուն հազար / ՀՀ դրամ
7/ անասնաբույժ - 0,25 հաստիքային միավոր - 20000/ քսան հազար /ՀՀ դրամ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՆՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԻՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատաշեն, (096) 444444, azatashen.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 36

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<< Տեղական ինքնակառավարման մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 32 - րդ կոտի պահանջներով.

Ավագանին որոշում է՝

Հաստատել Ազատաշեն համայնքի սեփականության 2020թվականի գույքագրման փաստաթղթերը , համաձայն հանձնաժողովի կողմից կազմված ակտի :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՆՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԻՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
Ազատաշեն համայնքի ավագանու
16.12.2020թվականի թիվ 36որոշման

Հ	Անվանումը	Չափ. միավ	Քանակը	Հիմն. Միջոց Միասնական Ֆոնդ 12.2019թ.	Բալանսային Մնացորդային Արժեք 12.12.2020թ.	մաշվածք 12.12..2020թ.	Մուտք 2020թ.	Հաշվարկվել մաշվածք 2019թ-ի /վերագնահատվել է 18.05.2020թ/	Հիմն.Միջոց Միասնական Ֆոնդ 12.12.2020	Բալանսային Մնացորդային Արժեք 12.12.2020	մաշվածք 12.12.2020
Շենք, շինություն											
1.	Համայնքապետարան վարչ. Շենք	հատ	1	9360,5	9360,5				9360,5	9360,5	
2	Կենտրոնական փողոցների լուսավորում		21	4000,0	4000,0		930,3		4930,3	4930,3	
	ընդամենը			1360.5	13360.5		930.3		14290.8	14290.8	
Համայնքապետարանի գույք											
1	համակարգիչ								261.7	261.7	
2	ծորակ								1.8	1.8	
3	լվացարան								16.5	16.5	
4	լինոլիում	գ/մ	67.363	67.363					117.063	117.063	
5	շլակ	1	U-40								

6	պահարան	հատ	2	50.917	50,917				50,917	50,917	
7	վահանակ	հատ	1	Պ-164ԱՄ	-						
8	Պատճենահանման սարք Հատ		1	78.339	78.339				78.339	78.339	
9	Սուրճի բաժակ	հատ	12	8,0	8,0	-		-	8,0	8,0	-
10	ափսե	հատ	12	22,0	22,0	-		-	22,0	22,0	-
11	Էլ ջեռուցիչ	Հատ	2	36,0	36,0	-		-	36,0	36,0	-
12	համակարգիչ	հատ	1	240,0	-				240.0	240.0	
13	ջահ	հատ	1	18,0	18,0				18,0	18.0	
14	վարագույր	մ	15	45,0	45,0	-	-	-	45,0	45,0	-
15	փական	հատ	3	6,0	6,0	-	-	-	6,0	6,0	
16	Էլ. Կարգավորիչ սարք	հատ	1	40.326	40.326		-		40.326	40.326	
17	Էլեկտրական թեյնիկ	հատ	1	15.275	15.275				15.275	15.275	
18	Օթոցակիչ	հատ	1	240.5810.0	240.581				240.581	240.581	
19	Դյուրակիր համակարգիչ	հատ	1	96.945	96.546				96.945	96.945	
20	գիրք	հատ		5,6	5,6	-	-	-	5,6	5,6	
23	Դարակ էրկաթյա	հատ	18	4,5	4,5				4,5	4,5	
24	դարակ	հատ	1	0,5	0,5				0,5	0,5	
24	բաժակ	հատ	12	4,0	4,0				4,0	4,0	
25	կոմոդ	հատ	1	60.0	60.0				60.0	60.0	

26	զրասեղան	հատ	1	45.0	45.0				45.0	45.0	
27	աթոռ	հատ	3	25.0	25.0				25.0	25.0	
28	Հոլովակավոր աթոռ	հատ	1	35.0	35.0				35.0	35.0	
29	աթոռ	հատ	6				60.0		60.0	60.0	
30	սեղան	հատ	1				60.0		60.0	60.0	
	Ընդամենը			15764.346	15764.346		120.0		15884.346	15884.346	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատաշեն, (096) 444444, azatashen.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 37

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7 - րդ հոդվածի 8- րդ կետի 3 – րդ ենթակետի պահանջներով

1.Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով Արարատի մարզի Ազատաշեն համայնքում Մարատ Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր 03-006- 0102 -0007/ 0,321 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոփոխել և դասել արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիայի 'գյուղատնտեսական արտադրական հողամասերի գործառնական նշանակության:

2. Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՆՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԻՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ